ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի համայնքի հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասի վարձակալության իրավունքի մրցույթ

ԼՈՏ-ի անվանումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը	Մակերեսը՝ քմ	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների, առկայության մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Հողամասի տրամադրման ժամկետը	վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը /սակարկվող/
Լոտ 1/Վ-23/	գ.Հովք 1-ին փողոց 1/1	11-044-0207-0021	263.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	առանց կառուցապատման իրավունքի. գծային ենթակառուցվածքների օտարման և իրավաբանական անձանց սանիտարապաշտպանական գոտիներում գտնվող հողամաս	գրունտային ճանապարհ	առկա են մինչև 100մ հեռավորության վրա	ըստ գործող օրենսդրության պահանջների	25 տարի	10 520 դրամ

Մրցույթն անցկացվում է բաց: Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի տրամադրման պայմաններին, գրաֆիկական նյութերին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնում՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին մրցույթի մասնակցության վճարի՝ 20000 դրամի մուծման անդորրագիր: Մրցույթի մասնակիցները մրցույթի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի տարեկան վճարի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Եթե մասնակիցը մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է տարեկան վճարի գնի մեջ: Մրցույթում հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ և տարեկան վճարի ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողօգտագործման իրավունքի այլ սուբյեկտներ:

Մրցույթի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովին՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:

Մրցույթը կայանալու է 2023թ. մայիսի 15-ին ժամը 11:00-ին, Դիլիջանի համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին, հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023թ. մայիսի 08-ը, ժամը 18:00: